



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոսի 2019թ.

N 10-Ա

ք.Ստեփանակերտ

**ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ
ԵՎ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՍՓՈՓԻՉ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Ի գիտություն ընդունել ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2019 թվականի հունիս-հուլիս ամիսներին կազմակերպված և անցկացված մասնագիտական դասընթացների ամփոփիչ արդյունքների մասին տեղեկանքը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Ե.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019թ. հունիս-հուլիս ամիսներին ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման մասին

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են բավականին միջոցառումներ ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

ՏարԸՀ-ների առաջարկությունների հիման վրա ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի փոխարինողի կողմից հաստատվել է ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու ժամանակացույցը, իրականացվել է ըստ գոտիների տեղաբաշխումը, որի համաձայն Մարտակերտի շրջանը բաժանվել է 3, Հաղբուրթի շրջանը՝ 2, Ստեփանակերտ քաղաքը՝ 9, Մարտունու շրջանը՝ 4, Ասկերանի շրջանը՝ 5, Շուշի, Շահումյանի և Քաշաթաղի շրջանները՝ 1-ական գոտիների:

Մասնագիտական դասընթացները անց են կացվել 2019թ. հունիսի 10-ից մինչև հուլիսի 6-ը, որին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 1032 դիմումատուներ՝ 157 համայքներից:

Հաշվի առնելով, որ դասընթացների մասնակիցների 33,1 %-ը (342 քաղաքացի) առաջին անգամ են մասնակցում մասնագիտական դասընթացների, ի տարբերություն նախորդ տարիների, դասընթացները դասախոսական կազմի կողմից վարվել են առավելապես բանավեճերի, նոր ընտրական օրենսգրքի առանձին երկիմաստություն պարունակող հոդվածների, պրակտիկայում հաճախակի հանդիպող դրվագների վերլուծությամբ, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել դասընթացների մասնակիցները:

Ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացները նախապատրաստվել, կազմակերպվել և անցկացվել են հրապարակայնորեն, ընթացքի մասին պարբերաբար լուսաբանվել են թե շրջանային, և թե հանրապետական զանգվածային լրատվության միջոցներով:

Այսպիսով՝ 2019թ. հունիս-հուլիս ամիսներին ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպված մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 1032 ԱՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ, որոնցից 342-ը (33,1%)՝ առաջին անգամ:

Որակավորում ստացած քաղաքացիներից 693-ը (67,2%) ունեն բարձրագույն, 154-ը (14,9%)՝ միջին մասնագիտական, 185-ը (17,9%)՝ միջնակարգ կրթություն, ըստ կուսակցական պատկանելության՝ 738-ը (71,5%) անկուսակցական են, 126-ը (12,2%)՝ Արցախի ժողովրդավարական, 121-ը (11,7%)՝ Ազատ Հայրենիք, 24-ը (2,3%)՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն, 5-ը (0,5%)՝ Շարժում-88, 14-ը (1,4%)՝ Ազգային վերածնունդ և 8-ը (0,8%)՝ այլ կուսակցությունների անդամներ են: Ըստ զբաղվածության՝ 775-ը (75,1%) աշխատում են, 257-ը (24,9%)՝ չեն աշխատում, 266-ը (25,8%)՝ արական, 766-ը (74,2%)՝ իգական սեռի ներկայացուցիչներ են: Ըստ տարիքի՝ 391-ը (37,9%) 18-35, 363-ը (35,2%)՝ 36-50 և 278-ը (26,9%)՝ 50-ից բարձր տարիքի քաղաքացիներ են:

Ընդհանուր առմամբ 2019թ. ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են

ստացել 1032 ԱՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ, ընդ որում՝ 342-ը կամ 33,1%-ը դասընթացներին մասնակցել են առաջին անգամ, այսինքն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրեթե մեկ երրորդը կձևավորվեն նոր անդամներից:

Հաշվի առնելով, որ որակավորման վկայականներ տրվում են 3 տարի ժամկետով, իսկ 2016-2019թթ. մասնագիտական դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 3241 քաղաքացիներ, ուստի ներկա դրությամբ բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովները կարող են ձևավորվել ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան:

Ամփոփ տվյալները կցվում են:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ